

զոր այս եւ ուրիշ գործերու կարգադրութեան համար կը զրկենք Ձեր ներկայութեան, մինչեւ որ, պերճաշո՛ւք իշխան, հաճիք խոստանալ իրեն, թէ երբ մեր դեսպանը մեր անձնական թղթերով ներկայանայ Ձեզ՝ մե՛ր սիրուն եւ պատուին համար ազատ պիտի արձակէք վերոյիշեալ թագաւորն ու թագուհին, իրենց զաւակներովը միասին. եւ ասով մեծապէս գո՛հ պիտի մնանք եւ բոլոր սրտէ չնորհապարտ Ձեզ :

Ինչպէս ամէն մարդէ մանաւանդ իշխաններէ կախկալուի որ կատարեն ինչ բանի որ հաւանին եւ ինչ բան որ խոստանան, կսպասուի որ աւելի՛ յօժարութիւնով ու գթասիրութիւնով կատարեն նոյնը նկատմամբ այն անձերուն՝ որոնց բախտն ա՛յնպէս բերած է որ պատեւազմի եւ գինամարտի մէջ եւ կամ ուրիշ կերպով իրենց ձեռքն ինկած են : Այդ պարագային մէջ իշխաններու եւ սուլտաններու գթութիւնն ու մեծասիրութիւնը՝ աւելի՛ կը բարձրացնեն իրենց փառքն ու պատիւը :

Մեր բոլոր սրտով կը խնդրենք, որ ի սէր եւ ի մեծարանս մեր տէր Աստուծոյ, որու հրամանով թագաւորները կիշխեն, եւ մասնաւորապէս մեր պատուին համար որ շատ անգամներ գրեցինք Ձեզ եւ խնդրեցինք, ինչպէս հիմա ալ կը խնդրենք, որպէս զի յիշեալ թագաւորը, թագուհին, ամբողջ իրենց զաւակներովն ու ստացուածքներովն արձակէք բանտէն եւ չնորհէք իրենց այն ազատութիւնը զոր ունէին իրենց բնատարկութենէն առաջ : Ասով առիթ պիտի ունենաք ծառայելու Աստուծոյ, միանգամայն արտասովոր հաճոյք պատճառելով եւ պատիւ ընելով մեզ, որուն՝ ինչպէս նաեւ Ձեր խոստացած բոլոր բաներուն փոխարէն, վստահ կրնաք ըլլալ, որ նմանօրինակ դէպքերու մէջ մե՛նք ալ նոյնը պիտի ընենք, Ձեր հաճոյքին եւ պատուին համար : Եւ Ձեզ ապացուցանելու համար թէ այս ազատութեան գործը սրբօրէն փափագելի է մեզ, կը զրկենք Ձեզ մեր դեսպան եւ սիրելի խորհրդական ասպետը՝ Բոնանատ Սապէրա, որ պիտի ներկայացնէ Ձեզ մեր այն նամակը՝ որմէ կատարելապէս պիտի տեղեկանաք այս խնդրի մասին մեր ունեցած բոլոր գիտաւորութիւնները : Եւ նոյն անձին միջոցով մտերմաբար կը զրկենք Ձեզ մեր գոհարեղէններէն մի քանի փոքր նուէրներ, եւ խանդաղատանքով կը խնդրենք որ հաճիք ընդունիլ սիրով մեր դեսպանն ու նուէրներն իբր նշան բարեկամութեան, առանց նայելու ընծային՝ այլ զանոնք Ձեզ նուիրող անձին սիրուն :

Կրնաք կատարելապէս հաւատ ընծայել այն ամենուն որ մեր դեսպանը մեր կողմէն պիտի ըսէ Ձեզ վերոյիշեալ խնդրի մասին, իբրեւ թէ մենք ներկայ ըլլայինք, եւ անիկա՝ մեր յանձնարարութեան վրայ՝ մեզ չափ լաւ կերպով պիտի կարենայ խօսիլ Ձեզ հետ նոյն խնդրին վրայով :